



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

16.05.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԱՄ-2017/01

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ)՝ քննելով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի 02.05.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/01 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 02.05.2017թ. Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40», «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրերով, ինչպես նաև՝ ՀՀ ԿԱ

ոստիկանության զորքերի կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ ՈԶ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին (այսուհետ նաև՝ Ընթացակարգեր):

Ընկերությունը հայտնել է նաև, որ Պատվիրատուները սահմանված կարգով տվյալների ճշտման մասին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում են ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Հարցման արդյունքում՝ Պատվիրատուները ստացել են պատասխան, որի համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող (2016թ.) հաշվետու տարվա ընթացքում, պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքին:

Ելնելով վերոգրյալից՝ Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովները Ընկերության հայտերը մերժել են:

Ընկերությունը, որպես բողոքի իրավական հիմք և հիմնավորումներ նշել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի իրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար իրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 67-րդ կետի համաձայն՝

մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ընկերությունը բողոքով հորհրդին հայտնել է, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի 2016թ. շահութահարկի ճշգրտված հաշվարկի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրվել է տեղեկանք, որի համաձայն՝ Ընկերության 2016թ. ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 279 590 904 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվեկշռային արժեքը՝ 254 995 809 ՀՀ դրամ:

Բացի այդ, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին և հայտնել, որ Ընթացակարգերի շրջանակներում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտերը մերժվել են այն հիմքով, որ Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքը պակաս է պարտավորությունների հաշվեկշռային արժեքից: «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն ահազանգով խնդրել է Պատվիրատուներին պարտավորեցնել դադարեցնել գնահատող հանձնաժողովների Ընկերության հայտերը մերժելու մասին որոշումները, կատարել կրկնակի հարցում և Պատվիրատուներին տրամադրել հարցման արդյունքները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հարցում է կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն տրամադրել է եզրակացություն, համաձայն որի Ընկերության 2016թ. ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 279 590 904 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվեկշռային արժեքը՝ 254 995 809 ՀՀ դրամ, այսինքն՝

հաշվետու տարվա ընթացքում Ընկերության պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Ընկերությունը գտնում է, որ հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցելու հիմքով Ընկերության հայտերը մերժելու արդյունքում խախտվել է Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով, Կարգի 67-րդ կետով սահմանված պահանջները, ինչը հանգեցրել է նաև Օրենքով երաշխավորված (3-րդ և 5-րդ հոդվածներ) ընթացակարգերին մասնակցելու իրավունքի զրկմանը:

Ընկերությունը ներկայացված բողոքով հորհրդին խնդրել է՝

1. Կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40», «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրերով, ինչպես նաև՝ ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԱ ՈՋ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների ցանկացած գործողության իրականացումը, որոշումների կայացումը:

2. Դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40», «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրերով, ինչպես նաև՝ ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ ՈՋ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ» ծածկագրով ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների կայացրած որոշումները՝ «Մասիսի Գարուն կաթի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտերը մերժելու վերաբերյալ:

3. Պայմանագիր կնքված լինելու դեպքում «ՀՀ ԿԱ ՈՋ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել ապօրինի:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 05.05.2016թ. ժամը 15:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 02.05.2017թ. բողոքով Խորհրդին հայտնած դիրքորոշումը:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

ՀՀ պաշտպանության նախարարությունը 04.05.2017թ. թիվ ԴՎԱ/1282 գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» ծածկագրերով ընթացակարգերի շրջանակներում գնահատող հանձնաժողովների կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրով ընթացակարգում՝ 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից:

ՀՀ պաշտպանության նախարարությունը Կարգի 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների ճշտման մասին հարցում է կատարել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե:

Ի պատասխան վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Պատվիրատուին տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի ակտիվները կազմել են 279 590 904 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 286 995 809 ՀՀ դրամ, այսինքն՝ հաշվետու տարվա ընթացքում Ընկերության պարտավորությունների հաշվեկշռային արժեքը գերազանցել է ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացությունը, Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովները մերժել են Ընկերության հայտերը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 05.05.2016թ. ժամը 15:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են 04.05.2017թ. թիվ ԴՎԱ/1282 գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերը 04.05.2017թ. թիվ 4/492 գրությամբ Խորհրդին է ներկայացրել «ՀՀ ԿԱ ՈԶ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով 29.03.2017թ. կազմակերպված «ՀՀ ԿԱ ՈԶ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն 1-ին և 14-րդ չափաբաժիններով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերը, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացրել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հնարկային պարտավորությունների, ինչպես նաև Կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 14.04.2017թ. տրված եզրակացության համաձայն՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի 2016թ.

հաշվետու տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմել է 279 590 904 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 286 995 809 ՀՀ դրամ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 18.04.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ընկերության հայտը և փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է ներկայացրել հաջորդող տեղերը զբաղեցրած մասնակիցներին:

ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 05.05.2016թ. ժամը 15:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է 04.05.2017թ. թիվ 4/492 գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲԽ-ԱՄ-2017/01 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/01 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հանդերձանքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40», «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրերով, իսկ ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից՝ «ՀՀ ԿԱ ՈՁ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգեր, որոնց մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների՝ հայտեր է ներկայացրել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը Ընթացակարգերին մասնակցելու նպատակով 22.03.2017թ., 31.03.2017թ., 03.04.2017թ. և 07.04.2017թ. ներկայացրած հայտերի թիվ 3.4 հավելվածներով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ **հայտերը ներկայացնելուն նախորդող հաշվեկշռի տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:**

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» ծածկագրերով ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների կողմից Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրով ընթացակարգում՝ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ ՈՁ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2017թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն նշված ընթացակարգի 1-ին և 14-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

5. Պատվիրատուները, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին կատարված հարցումներով խնդրել են տրամադրել տեղեկատվություն «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի վերաբերյալ:

6. Ի պատասխան վերոհիշյալ հարցումներին՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել են եզրակացություններ, համաձայն որոնց **«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտերը ներկայացնելուն նախորդող (2016թ.) հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 286 995 809 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ 279 590 904 ՀՀ դրամ:**

7. Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունները՝ Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովները մեխժել են «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտերը:

8. Ընկերությունը 20.04.2017թ. խոշոր հարկ վճարողների հարկային տեսչություն է ներկայացրել շահութահարկի հաշվետվության ճշգրտված տարբերակը, որի համաձայն՝ Ընկերության **ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 279 590 904 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվեկշռային արժեքը՝ 254 995 809 ՀՀ դրամ:**

9. «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն 25.04.2017թ. ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին և խնդրել Պատվիրատուներին պարտավորեցնել դադարեցնել գնահատող հանձնաժողովների Ընկերության հայտերը մերժելու մասին որոշումները, կատարել կրկնակի հարցում և Պատվիրատուներին տրամադրել հարցման արդյունքները:

10. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ թեժ գծին ստացված ահազանգի ընթացքը լուծելու նպատակով, 25.04.2017թ. թիվ 02/04.1/1667-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե ինչքան է կազմում Ընկերության՝ հայտերը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա (2016թ.) ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

11. Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 27.04.2017թ. թիվ 1/6-1/14168-17 գրությամբ հայտնել է, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 14.04.2017թ. ներկայացրած 2016թ. շահութահարկի տարեկան հաշվարկի համաձայն՝ Ընկերության 2016թ. հաշվետու տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 279 590 904 ՀՀ դրամ, պարտավորությունների արժեքը՝ 286 995 809 ՀՀ դրամ, սակայն Ընկերության կողմից 20.04.2017թ. հարկային մարմին է ներկայացվել 2016թ. ճշգրտված շահութահարկի հաշվարկ, որի համաձայն՝ 26.04.2017թ. դրությամբ **Ընկերության 2016թ. ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 279 590 904 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների արժեքը՝ 254 995 809 ՀՀ դրամ:**

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 02.05.2017թ. ներկայացրած բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 04.05.2017թ. թիվ ԴՎԱ/1282, ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի 04.05.2017թ. թիվ 4/492 գրությունները՝ կից ներկայացված փաստաթղթերով և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 27.04.2017թ. թիվ 1/6-1/14168-17 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար **հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:**

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն սույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Սույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից **հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:**

Ընթացակարգերի հրավերի 2.3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

«Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (**Հավելված 3.4**) այն մասին, որ հայտը ներկայացվելուն նախորդող՝

ա. երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից.

բ. հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

Այսպիսով, Ընկերությունը Պատվիրատուների կողմից կազմակերպված Ընթացակարգերին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտերի թիվ 3.4 հավելվածներով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտերը ներկայացնելուն նախորդող (2016թ.) հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը, մինչդեռ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովներին տրամադրված եզրակացությունների համաձայն՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի՝ հայտերը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա (2016թ.) պարտավորությունների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ **286 995 809 ՀՀ դրամ, իսկ ակտիվների հաշվեկշռային արժեքը՝ 279 590 904 ՀՀ դրամ:**

Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովները, հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոդմիտեի կողմից տրամադրված եզրակացությունները, մերժել են Ընկերության կողմից ներկայացված հայտերը:

Ընկերությունը ներկայացված բողոքով հորհրդին հայտնել է, որ 20.04.2017թ. խոշոր հարկ վճարողների հարկայի տեսչություն է ներկայացրել 2016թ. շահութահարկի հաշվետվության ճշգրտված տարբերակը, որի համաձայն՝ Ընկերության հայտերը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 279 590 904 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվեկշռային արժեքը՝ 254 995 809 ՀՀ դրամ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը՝ թեժ գծին ստացված ահազանգի ընթացքը լուծելու նպատակով, 25.04.2017թ. թիվ 02/04.1/1667-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե ինչքան է կազմում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի՝ հայտերը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա (2016թ.) ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրության՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 27.04.2017թ. թիվ 1/6-1/14168-17 գրությամբ հայտնել է, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 14.04.2017թ. ներկայացրած 2016թ. շահութահարկի տարեկան հաշվարկի համաձայն՝ Ընկերության 2016թ. հաշվետու տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 279 590 904 ՀՀ դրամ, պարտավորությունների արժեքը՝ 286 995 809 ՀՀ դրամ, սակայն Ընկերության կողմից 20.04.2017թ. հարկային մարմին է ներկայացվել 2016թ. ճշգրտված շահութահարկի հաշվարկ, ըստ որի 26.04.2017թ. դրությամբ Ընկերության **2016թ. ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմել է՝ 279 590 904 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվեկշռային արժեքը՝ 254 995 809 ՀՀ դրամ:**

Այսպիսով, հորհուրդն արձանագրում է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 27.04.2017թ. թիվ 1/6-1/14168-17 գրության համաձայն՝ Ընկերության հայտերը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա (2016թ.) ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը, քանի որ ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմել է **279 590 904 ՀՀ**

դրամ, իսկ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 254 995 809 ՀՀ դրամ):

Հետևաբար խորհուրդը գտնում է, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի «Ֆինանսական միջոցներ» չափանիշը՝ սույն մասով բավարարում է հրավերի պահանջներին և Ընկերության հայտերը այս հիմքով ենթակա չեն մերժման, ուստի խորհուրդը գտնում է, որ Ընկերության բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի 02.05.2017թ. խորհրդին ներկայացրած բողոքը բավարարել՝ դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40», «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/31» և «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/39» ծածկագրերով և ՀՀ ԿԱ ոստիկանության զորքերի կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱ ՈՁ ՇՀԱՊՁԲ-17/10/ԱԲ/1/ԻԾ» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտերը մերժելու մասին որոշումները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ